

կան հսկող կարգուելով՝ շահեցաւ բաւական դրամ եւ բաւական մըն ալ խորելով՝ պատճառ եղաւ պարտքի մը, զոր դժուարաւ գոցեցին տեղւոյն վաճառական հոգաբարձուները:

Դարձեալ Կ. Պոլիսի հրապարակին վրայ՝ Քափա մաճեաններէն ետք նշանաւոր հանդիսացաւ Ռումանիացի կամ Աւստրիացի Աճէմ օղլուն Պետրոս, որուն համբաւաւոր վաճառատունին մէջ մարզուեցան Կարապետ ու Տիգրան Գարակէօզեան եղբարք, մինչ իրենց մեծ եղբայրը՝ Գրիգոր Գարակէօզեան՝ հիմը կը դնէր տեղական հրապարակին վրայ ընդարձակ սեղանաւորական եւ կալուածատիրական գործերու, որ ապա առին մեծ համեմատութիւններ: Գարակէօզեան եղբարց կը հովանաւորէր գլխաւորապէս իրենց մօրեղբայրը Տակէս աղայ, համեստ ու աղքատասէր անձնաւորութիւն մը: Իսկ Աճէմ օղլու Պետրոս՝ քսան տարիի չափ պայծառութեամբ շարունակելով իր բազմաշահ գործը Կ. Պոլիսի բանուկ հրապարակին վրայ Չաքմաքճըլարի վերի գլուխը՝ 200,000 ոսկիի հարստութեամբ անցաւ հաստատուեցաւ եւրոպական մայրաքաղաք մը՝ յետ վախճանին կտակելով իր մնացած հարստութիւնը տեղւոյն քաղաքապետարանին: Իր գործն եւ հռչակեալ անունը՝ փոխաբինութեամբ մը ձեռք առին Գարակէօզեան եղբարք, որ քսան տարի մը եւս վայելեցին Անկմ օղլու պասմասի կոչման արդիւնքը:

Ի բնէ զուսպ տնտեսագէտ եւ գործունեայ՝ Գարակէօզեան եղբարք, մանաւանդ վաղամեռի՛կն Կարապետ Գարակէօզեան, լո՛ւրջ հանգո՛ւշն եւ մէթոտի՛կ գործունէութեամբ շարունակեցին Անկմ օղլու անունով պասմայի հաստատեալ ու ծաղկեալ գործը, եւ յաջողեցան իրենց անունով ալ հիմնադրել Կ. Պոլիսի ու Անգղիայի